

ՏԼԵՅ

# ՄԿԱՐՏ




ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Գ.Մ.Ը.Մ.  
**Hai Scout** **Organe des**  
**SCOUTS ARMÉNIENS**

ՀՆԱՍԵ \_ Խորասանձեան Խան, Թի. 26, Սթամբուլ և Պարիս  
 Adresse \_ Khorassandjian Han, 26, SirKé-dji, Constantinople

Հեռագրի Ա. 2146 | ԲԱԺՆԵԳԻՆ | Telephone Ք. 2146

Պրին և Պատմ. Տի. 120  
 Արտատպ. Տի. 15  
 Ամսիկա. Տի. 150 | 16 ՕԿՏՈՍ. 1921



Գուլէլի կեդրոնա-  
 կան Որբանոցին մէջ  
 տեղի ունեցած Միջ-  
 որբանոցային Ողիմ-  
 պիական Մրցումներէն  
 վերջ՝ մրցանակարար-  
 խութեան հանդէսը :



Ազգային Խնամաա-  
 րութեան նախաձեռ-  
 նութեամբ և Ս. Պա-  
 րիարք հօր նախա-  
 գահութեամբ 10 Յու-  
 լիս 1921 ին՝

Կեդրոնը կազմ են Տ. Զուկն Ս. Պաշաբեր և Ազգային Քոմ. Պեզեան Խնամասարութեան և  
 Հ. Մ. Ը. Մ.ի անդամներ և՛ օրուան երեք ՇՈՄԿՕՆներ





# ՍԿԱՍՏԱՆԹԵԱՆ ԳԼԽՈՒՐԱԿԱՆՈՒՆ ԱՐԺԷՐԸ

Հետեւողս բնամբ DEAN RUSSELL Ի

(Եւրոպայի Քաղաքացիական Մարտի Բաժանման Բաժնէն)

(Տար. թիւ 5 հմ եւ վերջ)

Բայց Պոլ-Սկաստանիան Չեռնարկին դաստարակութեան մատուցած ամենէն մեծ ծառայութիւնը կը կայանայ ա՛ն որ մանկավարժական մեթոտներուն մէջ : Իրր սասցիչ զգեստը կը հանեմ Արք Թոպրըզ Պէյարն-Բասրի հանձարին առջեւ, որ այն-

քան թիչ ժամանակի մէջ ուրիշ ամէն ամբիկացի մանկավարժէ աւելի գործ տեսուեկարացիրը կազմելու յատուկ մեթոտները կենդանացնելու համար :

Ներհակարար բնասնեկան թոյլ հակադասութեան, երբեմն խիստ, յաճախ մեղկ եւ միշտ անձատիրական, ներհակարար դպրոցական կարգապահութեան, որ բնդհանրապէս մեքենական է եւ ինքնակալ, սկաստանի մեթոտով կ'ազէ որ ազուն ընէ բան մը որ համաձայն է միանդամայն ազուն փափագին եւ շահերուն : Սկաստանիան գործերէն



Պոպոյ Հայ Սկաստանիան կեանքն

շատերը ինքզինքնին կը հարկադրեն, որովհետեւ ազուն կ'ընարէ իր բնեկիցը. անոնցմէ շատերը այնպիսի կարողութեան մը կը պահանջեն որ վեր չէ ազուն կարողութեանէն : Տղուն լատագոյն ճիգերը ազէկ ունակութեան մը ստանալուն կը ծառայեն : Ան ամէն մէկ յաջողութիւնը կը վարձատրուի այն կամ այն կերպով, բան մը որ մարդկային տիրութիւնը գորտութեան կը փոխէ : Սկաստանիան դաստիարակութեան մեծագոյն սուսեկութիւնը սն է որ սկաստանիան մրցումներու մէջ կորսնցնող չի կայ : Մէկ սկաստանի մը շահը ուրիշի մը կորուստը չէ, երբ մէկ խմբակ մը կը շահի, ուրիշ խմբակ մը չի պարտուիր : Ան սակայն ս'ի կրնայ բնէ

թէ Սկաստանիան մրցումներու մէջ նաեւ խանդավառութիւն, նաեւ յամառութիւն կայ չահելու : Սկաստանիան առաջինութեան մէջ իր վարձատրութիւնը կը գտնէ ազէկ բնեկուն մէջ բան մը գոր կ'արժէ ընել : Սկաստանիան վարչային կարգակերպութիւնն ալ շատ խմառան կերպով չորինուած է : Սերա շիւսմ ունին սկաստաները իրարու հետ, ինչ որ պատասխանատուութեան զգացումը կ'աւելցնէ՝ զրգիւս բլլալով միեւնոյն ատեն արժանապատուութեան զգացումին մշակման : Ար համարձակիմ բնէ թէ շատ մը սկաստաներ աւելի սերա յարարութիւն ունին իրենց Սկաստան խմբակներուն քան դպրոցի սուսեկցիներուն կամ



ուրիշ կրթական պայմաններու հետ, Ակադ.տոմիեան ամէնէն ուշագրտ. կողմերէն մէկը ան է որ պարտականութիւններ ցոյց կուտայ ֆոխանակ իրաւունքներ փառաբանելու: Ակադ.տոմիեան օրէնքները հաստատական բաւերով բանաձեւուած են և ոչ թէ Միւրով՝ Մովսիսական տանարան-եային պէս: Իսկ այդ օրէնքներուն պատկը կը կազմեն այն պարտականութիւնը զոր ունի ամէն սկստաւ բարի զորմ մը կասարելու ամէն օր: Ասիկայ զիստ մըն է որ արժանաւորապէս կրնայ դատուիլ կարի մեքենային, չափեարժ մեքենային և հետազրին զիստերուն քով և անբազղատակի օրէն աւելի արժէք ունի քան սեւ է ծրագիր

նկարագիրը կազմելու և քաղաքացիներ պատրաստելու համար:

Ակադ.տը այս միջոցաւ ո՛չ միայն այնպիսի զիրքի մը մէջ կը դրուի որ կը հասկնայ բարոյական օրէնքները, այլ և այդ օրէնքները իր կեանքին մէջ կը ներմուծէ, կ'իրացընէ զանոնք:

Կը հետեւի թէ սկստական ծրագիրը իր հիման մէջ, բարոյական և քաղաքացիական դաստիարակութեան ծրագիրը մըն է, որ կ'աւժակցընէ և կ'արդիւնաւորէ զպրոցին, ընտանիքին և եկեղեցիին միջոցաւ զբուսած դաստիարակութիւնը, և հազարաւոր ճարտար ձեւերով, ամուր ունակութիւններ կը հաստատէ սպուն մէջ պարկեշտ և ուղղու-



Ձրանապի սկստաներ՝ Ձրանապի մէջ

միտ կենցաղի Բաց ատախ, տգան կ'ընէ անձնագատա՛ջ և ձեռներէջ: Եւ սկստա-տոմիեան մանկավարժական առաւելութիւնը, պիտի բռնէինք կատարելութիւնը, անոր մէջ կը կայանայ որ այս երկու տեսակէաները — բարոյական-քաղաքական բարեմասնութիւններ և ձեռներիցութիւն — շատ ներգաշնակ կերպով իրարու հետ խառնուած են:

Արքան նշանակալից է «Պատրաստ ելի՛ք նշանարանը, նշանակալից մանաւանդ մեր օրով, ներկայ պարագաներուն մէջ»: Պէտք է պատրաստ ըլլալ — պատերազմը ցոյց տուաւ մեզ այս բանը — ֆիզիքապէս, պէտք է առակ ըլլալ: Այս պայմանը ա՛յնքան կարեւոր է խաղաղութեան նպատակ-

ներուն համար: Ներկայ քաղաքակրթու-թիւնը, որ մեզ հետացուցած է հին գարե-բու կենսաբանական պայքարէն, այլատերու-թեան մասնած է մեր մարմնայն զործարան-ները և բրած է մեզ ամէն կերպով թուր-մարթ մարդեր:

Այս տեսակէտով այլ սկստա-տոմիւնը որ հիմնուած է բացօթեայ կենցաղի վրայ, անգնահատելի ծառայութիւններ կը մատուցանէ:

Իրաւ է որ, սկստա-տոմիէնէ դուրս, սո-վորական ծրագիրներն այ կը պարունակեն ֆիզիքական դաստիարակութեան և նկարագրի կազմութեան յատուկ շքեղ առաջը-ներ, բայց ծրագիրը ոչինչ է, կարեւորը ծրագիրը զործածելու եղանակն է: Ակադ.տ



խմբապետը իր տղուն հոգեբանական պահանջներուն համաձայն մեթոսով մը տղուն մէջ իրապէս կ'ստեղծէ սէր բացօթեայ կեանքին համար, սէր ուղիղին համար, սէր արեւուն համար, սէր մաքուր սքօրքի համար սկառուտ խմբապետը այնմարդն է որ կ'իրականացնէ, կ'իրագործէ այս ծրագիրը տղոց կենցաղին մէջ: Աւրիշ ոչ մէկ կերպով կարելի է իրագործել զայն:


Միացեալ Նահանգաց մէջ բուն վիճարանութեան առարկայ է սա խնդիրը թէ ըմբռնական խողերը աղէկ են թէ դէշ: Շատեր կը խորհին թէ աղէկ են. նոյնքան շատեր կը խորհին թէ դէշ են: Իրողութիւնը

սա է թէ ոչ աղէկ են ոչ ալ դէշ, բայց կրնան ըլլալ աղէկ կամ դէշ, ըստ այն կերպին՝ որով կը խաղացուին և կ'առաջնորդուին անոնք:

Նոյն բանը կարելի է ըսել սկառուտութեան համար:

Հետեւարար, սկառուտական ձեռնարկի մեծագոյն կարիքն է ԱՐԺԱՆԸՆՏԻՐ, ՉԵՌՆԸԱՍ, ԱԶԲԲԱՅ, ՊԱՐՏԱՃԱՆԱԶ ԽՄԲԱՊԵՏԵՐ, այնպիսի մարդիկ՝ որոնք անդադար աղայոց աչքերուն առջև կենդանի դոյներով պատկերացնեն սկառուտութեան տեսլապաշտ տեսլականները:

Յ. Յ. ՀԻՆԴԼԵԱՆ



## ՖՐԱՆՍԱ ԵՒ ՍԲՕՐԸ

### ԽԻՍ ՇԱՀԵԿԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ Պ. ԿԱՍԹՈՆ ՎԻՏԱԼԻ ՀԵՏ

Ասկէ վեց ամիս առաջ Օպըրվըր թերթը իրաւացի կերպով Պ. Կասթօն Վիտալը կը կոչէր Ֆրանսայի Սքօրմերու հախարարը, հակառակ որ պաշտօնապէս այդ տիտղոսը տակաւին գոյութիւն չունի: Պ. Վիտալ Մասնագիտական Ուսմանց նախարարութեան անուանական խորհրդականն է: Իրականին մէջ, ամէն տեսակ արկերիք խաղերուն ֆրանսայի մէջ տարածման և զարգացման ի նպաստ արտաքոյ կարգի գործ մը կը կատարէ և երկրին գանաղան կողմերը կազմուած մարմնակրթական միութիւնները կառավարական վաւերացման կ'ենթարկէ: Պ. Վիտալ այժմ կ'աշխատի ֆրանսայի մէջ հաստատել Սքօրի Ազգային Պատկանուն մը (Office National de Sport) որ պիտի ունենայ իր ուրոյն պիււճէն և իր գործառնութիւններուն մէջ պիտի ըլլայ բացարձակապէս անկախ: Ասկէ զատ ան կ'աշխատի խորհրդարանին վաւերացման ենթարկել զպրոցներու և զօրանոցներու ֆիզիքական կրթութեան շուրջ նոր օրինագիծ մը: Ան կ'աշխատի նաև 1924ին Բարիդի մէջ տեղի ունենալիք Ողիմպիական Սաղերուն համար 40 միլիոն ֆրանքի չափ խոշոր գումար մը ասպնովել, զոր հաւասարապէս պիտի հայթայթեն կառավարութիւնը և քաղաքապետութիւնը: Պ. Վիտալ Սքօրի Միութիւններու Ֆրանսական Դաշնակցութեան (Fédération Française des associations de Sport) նախագահն է և բոլոր կարեւոր սքօրի հանդէսներու ներկայ գտնուելով, ամէն կարգի սքօրներուն շուրջ կ'աշխատի ընդհանուր շահագրգռութիւն մը ստեղծել:

Ինչ լարի եղաւ բացատրելու սքօրի աշխարհին մէջ Ֆրանսայի ապագան: Մինչև վերջի տարիներս ֆրանսայի մէջ խաղերով դրեթէ չէին հետաքրքրուիր: Արդարեւ անոնք անդլիայիները կը ծաղրէին Ֆուբոլով, քրիքթով և կուփամարտութեամբ այնքան հետաքրքրուելուն համար: Ֆրանսայի կրիստոսորդը՝ տարբեր գրազումներով ծանրարեւնուած էր:

«Այսու համդեմ, — ըսաւ Պ. Վիտալ, հաստատապէս կը հաւատամ քե Սնգլիս իր պատկառանք և գեղականութիւնը մեծ մասամբ սքօրին կը պարսի: Հարիւր հազարուր



Ֆրանսացիներ, որոնք բարեկամական համաձայնութեան առաջ Անգլիոյ մասին շատ քիչ տեղեկութիւն ունեին, խաղաղաբերուն մեջ անգլիացիներուն հրաշալի գործերուն ծանօթ էին: Իմ գաղափարովս, սբօրը կարելի է փոփոխականի լաւագոյն միջոցի մը վերածել:»

«Lus իս այժմէն իսկ ամեն կարելիս պէտք է ընել, մեկ քանի տարի վերջ Բարիզի մեջ տեղի ունենալիք միջազգային սբօրի հաւաքոյթին լաւագոյն կերպով պատրաստելու համար, որպէսզի այդ հանդիպումը աշխարհիս պատմութեանը մեջ նմանը չունենայ: Այդ շրջանին Բարիզը Տիեզերքի կեդրոնը կրնամք ընել եւ բազմաթիւ այցելուներու հիւրասիրութիւն մը գոյց կրնամք տալ, եւ հարկ է որ տանք: Շատ հաւանական է որ այս հաւաքոյթը աւելի օգտակար արդիւնք մը պիտի տայ, քան թէ դիւանագիտական որ եւ է ձեռնարկ:»

**ԲԱՆԱԿԻ ՀԱՐՅԸ.** — Պաշտօնական շրջանակներու կողմէ: Աղիմպիականներուն

մասին արուած ահազին կորեւորութեան շուրջ որ և է կասկած կարելի չէ ունենալ: Նմանապէս անտարակուսելի է որ Ֆրանսա սբօրի զարգացման մեծ կորեւորութիւն մը կուտայ: Ինչպէս որ Պ. Վիտալ ինձ բացատրեց, սբօրներու քաջալերութիւնը բանակի կենտական և լուրջ հարցին լուծման խիտ պիտի նպաստէ: Ֆրանսա ինքնապաշտպանութեան համար միշտ պատրաստ պէտք է ըլլայ, սակայն քաղաքացիներէն չի կրնար ոչոք մը դատել և անպօրծ պահել զանոնք. Ֆրանսա չի կրնար այս արտադրող ձեռքերէն մէկ մասը ինքնապաշտպանողական նպատակին համար ամբողջեան դատապարտել. Ֆրանսա անցեալի նման միշտ զէնքի տակ չի կրնար պահել իր երկտասարդները: Թէեւ տակաւին ֆրանսայի մէջ զինուորական ծառայութեան տեւողութեան, բանակին կազմութեան և թիւին մասին որ և է զինուորական միջոցներ չեն որդեգրուած, սակայն անտարակուսելիօրէն ֆրանսայի պետական մարդիկը չպիտի ուզեն անտեսել այն ամէն միջոցները, որոնցմով կարելի պիտի ըլլայ բանակի կազմութեան բերք մէկ կողմէն թեթեւցնել և միւս կողմէն աւերակուած երկրին վերաշինող ոյժերէն նուազագոյն չափով մը միայն զրկել զայն:

«Գրեթէ բանակ չունեցող Անգլիոյ եւ Ամերիկայի մեծ գործերը տեսնիք՝ հրաշքեր կրցին գործել որովհետեւ սբօրցմէն ազգեր էին,» ըսաւ Պ. Կասթան Վիտալ: «Եթէ Անգլիա պատերազմին սկիզբներն իսկ հարիւր հազարաւոր զինուորներ կրցաւ լրկել դէպի Ֆրանսա եւ շուտով կրցաւ միլիոնաւոր հոգիներէ բաղկացեալ բանակներ կազմել, պատճառը այն էր որ այս մարդիկը եթէ զինուորական մարզակէ զուրկ էին, Ֆիզիքական առումով լաւ մարզուած էին: պատերազմի վերջի շրջանին նոյն ընդունակութիւնը Միացեալ Նահանգները գոյց տուին. ամենակարճ ժամանակուան մը մեջ Ամերիկա կրցաւ ռազմական զրկել միլիոնաւոր հրաշագործ սլամարդեր, որոնցմէ շատերը գրեթէ ուղիակի իրենց աշխատանքներէն մեկնած էին:»

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՍԲՕՐՆԵՐ.** — «Տարօրինակ պիտի ըլլար եթէ այս բացարձե իրողութիւնները պատճառ չըլլային որ սբօրը Ֆրանսայի մեջ այսօր մեծ մղում մը ստանար: 1870ի Ֆրանսո-Քրուսիական պատերազմին ասեմն ալ իրաւ է թէ արկերիկ շարժում մը գոյութիւն ուներ, բայց միայն Մեծ պատերազմէն վերջն էր որ սբօրներու կրթութեան պէտքը իրապէս զգալի եղաւ:»

«Այժմ մարմնակրթական միութիւններուն թիւը զինագաղարի ասեմն եղածներէն ուրը անգամ աւելի է: Ֆրանսայի մեջ առ նուազն 5000 արկերիկ միութիւններ կան եւ յաջորդ տարի բերեւս աւելի ըլլան: Պէտք է նկատել թէ մեր հողին վրայ միայն մեկ կամ երկու տեսակ սբօրներ չէ որ զարգացած են: Արկերիկ որ եւ է մեկ խաղէն սկսեալ մինչեւ Բրկայի, Կոլմ, Կոփամատարութիւն, Թեմնիս ընդարձակ ասփնանով մը զարգացած են:»

**ԱՄՍԹԻՂՕՐ ԵՒ ԲՐՕՖԷՍԻՕՆԷԼ.** — «Ֆրանսական սբօրին յատկանշական մեկ կէտը այն է որ սբօրը բացարձակապէս տեսարժան տեսակէն է» ըսաւ Պ. Կասթան Վիտալ:

«Անուշտ ուսագրաւ բացարձակներ ալ կան — անտարակոյս սբօրներու նախարարը իր մտքին մէջ Գարբանիէի պարագան ունէր, որովհետեւ ինքը միշտ նկատուած էր Գար-



բանթիէի աճանաձեռն հիացողներէն մին — «սակայն, ընդհանուր առումով մենք այնպէս կ'ըմբռնենք որ խաղերը ոչ թէ դրամի, այլ խաղի միջոցն համար պէտք է խաղալ»: Յրանաացի սրտցմեկները ամէն բանէ աւելի սրտը մաքուր պահել կը բազման: Ահա այս պատճառով է որ Պ. Վրասալ կը ճզնի կազմել զօրաւորագոյն կազմակերպութիւններ սրտները հակակշռելու համար և հաստատել ինքնավար ազգային պաշտօնատուն մը որ ամաթորիզմը պիտի քաջալերէ:

**ԿԻՆԸ ԵՒ ՍԲՅՈՒՐ.** — «Մեծապէս կը հրեւոյն սեմելով որ Յրանաացի կիներն ալ սրտի կը մօտեման» — ըսաւ Պ. Վրասալ — անսարակոյս ասիկա յեղափոխութիւն մըն է: Աւանդական գաղափարները հարկ եր մեկտի բողոյ: Մասնաւորաբար ուշագրութիւն պէտք է ընենք որ իգական սրտը ցուցամուկական ձեւ մը չառնէ: Այս այնպիսի կէտ մըն է որուն վրայ զօրաւոր կերպով կը շեշտեն, որովհետեւ հասարակաց անկապտ կարծիքին դէմ ծանր աշխատութիւններ վասնելէ վերջ պէտք չէ ընդունիլ այնպէս սարբեր որոնք կասարելապէս առողջ չեն եւ սրտի ոգին չեն կրեր:

«Իգական սրտի հանդէպ երեւան եկած նոր եռանդը վախճամ շատ հեռուները երբալու միտում մը ունի: Կիները փութփութ խաղալ սկսած են, նոյնիսկ պոփսի ելան! Այժմ կիներուն համար մասնաւոր փութփութի խաղ մը կարելի է հնարել, սակայն մեզ ծանօթ Ֆութբոլի խաղերը լոկ արական խաղեր են, հետեւաբար կիներու անյարմար:

«Աղջիկներն ալ մանչերուն նման արիւթներ կրնան ըլլալ, սակայն այդ սարբեր կերպով մը պէտք է ըլլայ: Բաւական ոյժ պահանջող եւ կիներու անյարմար վստահաւոր եղող կարգ մը խաղերու իրենց ընտրութիւնը կը դատապարտեն»:

Հոս կ'արժէ յիշեցնել թէ ֆրանսա արդէն առնուողն երկու կին արտոյաններ ունի — Սի. դան Լանկլան րեկիտի և Սի. դան Ուրբից լողալու մէջ — և անոնց օրինակը մեծ մասամբ իգական սրտին արծարծման պատճառ դարձած է:

Օգոգրըր րերէն րարգմանեց  
Վ. Ս. ՓԱՓՍՁԵԱՆ

### ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿԻՒԻԿԻՈՅ ՄԷՉ

Ատանայի Կիւիկեան Հայ սկսուածներու մարզախաղի մէջ Յուլիս 31ին տեղի ունեցաւ 14 նոր սկսուածներու երկրման արարողութիւնը ծնողներու և համակիրներու ներկայութեամբը:

Երկրման արարողութիւնէն ետք տեղի ունեցան շիթի մարշաներ և կազմուեցան բուրքեր: Ահա տեղերու ընդհ. խմբապետին վեցամսեայ տեղեկագրին ընթերցումէն ետք տեղի ունեցաւ նաեւ Պօքս (3 րատնա):

Ահա տեղերու ֆանֆարը նուազեց ազգային և եւրոպական եղանակները

ԲՂԹԱԿԻՑ

..

Ատանայէն Կիւիկեան Հայ Արիներու կեդրոնէն ստացանք երկար նամակ մը, տեղոյն սկսուածական կեանքի մասին. Հ. Մ. Բ. Մ. կեդրոնի վարչութիւնը արդէն իսկ իր մտահոգութեան առարկան ըրած է Կիւիկիոյ սկսուածական շարժումը: մտ օրէն պիտի պատասխանենք ընդարձակ կերպով:

Հ. Մ. Բ. Մ. ԿԵԴՐ. ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ





**ՍԵՍՈՒՏԱԿԱՆ ԴՊՄԱԿՆԵՐ**

**Սիրելի Արշամ**

Բ. կարգի քննութեան պայմաններէն մին է նաեւ յաջող ըլլալ Kim ի խաղին մէջ, այսինքն ցուցադրուած 24 անձման առարկաներ մէկ վայրկեան դիտելէ յետոյ գէթ անոնց 16 հատը թուել:

Այս խաղը շատ աւելի պիտի նկատարարէ սկաուտները երբ գիտնան անոր պատմութիւնը, կը յիշեմ զայն կարգացած ըլլալ ու զայն կը պատմեմ քեզ համառօտիւ: — Kim կրճատումն է Kim ball O'Hara տղու մը անունին: Հնդկատամի մէջ ծառայող իւրանտացի տասնապետի մը որդին էր: Բոլոր իր ընկերները տեղացի ընկերներ ըլլալով շուտով անոնց լեզուն կրցաւ սորվիլ ու տեղակալ ըլլալ տեղական բոլոր բարքերուն: Իր սովորական ժամանցն էր հազուիլ հնդիկի մը պէս ու չրջագայիլ ոչոսպէս ծպտուած անոնց մէջ առանց անպատեհութեան: Օր մը, այս խաղը տեղւոյն գաղտնի ստիկանութեան

քննիչներէն միոյն ուշադրութիւնը գրաւեց ու խորհեցաւ թէ այդ տղան կրնար իրեն օգտակար ըլլալ, սկսաւ զինքը մարզել գաղտնի ստիկանութեան արհեստին մէջ: Մարզիւք ցոյց կուտար Kim ին զանազան տեսակ քարերով լեցուն ափսէ մը, կը թողուր որ զանոնք գիտէ մէկ վայրկեան ու յետոյ ափսէին վրայ լաթ մը ծածկելով, կը հարցնէր թէ որքան և ինչ տեսակ քարեր տեսած էր: Սկիզբը Kim անյաջող էր ու անոնցմէ շատ քիչեր կրնար միտքը պահել, բայց յաճախ փորձեց ու շուտով վարժուեցաւ:

Իր պաշտպանին ծառայութիւններ մատուցող օգնելով իրեն իր հետազօտութեանց մէջ ու կերջապէս ընդունուեցաւ իրեն անդամ գաղտնի ստիկանութեան:

Kim ի խաղը օգտակար է նաեւ սկաուտին համար, վասնզի իրերու մանրամասնութիւնները շուտով ընդգրկել ու վերջը



**Թօփգարուի Հայ Սկաուտները**

զանոնք վերջիչել զննական կարողութիւնը կը զօրացնէ:

Խաղը թերեւս շատերու միտքինակ երեւի, բայց ոչ հնարամիտ սկաուտին համար: Իրաւ է թէ երբ խաղը միշտ կրկնուի մարզարանին մէջ դժուար կ'ըլլայ ամէն անգամ 24 զանազան առարկայներ գտնել, բայց և այնպէս չկայ ուրիշ որ և է խաղ որ կարելի ըլլայ աւելի տարրեր ձեւերու տակ կրկնել: Ամենադիւրին ու դուարձալի կերպերէն մին է, փողոցը քաղով մարդ մը տրագութեամբ դիտել ու յետոյ, երբ անցած է, փորձել իր

հազուտաին մանրամասնութիւնները յիշել և կամ անձանօթ թաղերու տուները դիտել, պատուհանները ու վարդերը համրել և ըն. — եթէ խաղը իր այս հանգամանքովը սխիս փորձել սկաուտներուն հետ, կարճ ժամանակէն պիտի տեսնես թէ անոնք սովորութիւն ըրած են ինքնարեքարար ամէն ինչ զննելու: (Պոլսոյ փողոցներուն մէջ սկաուտը շատ զբաղած միջոցին մի գուցէ օր մը պիտի մը տակ մնայ!):

Երբ փոքր էի և տակաւին ոչ ոք չուէր, ունակութիւն ունէի մարդոց վրայ զննելու:



զարդ նորածեռութիւնները ուշադրութեամբ զննելու, յետոյ խանութներու ցուցափեղկին մէջ նոյն առարկաներու նմանը կը փորձէի դանկու ու այսպէս գիտէի թէ ուր ինչ կը ծախուէր: Օր մը ընկերոջս տունն էի, աիկին մը և պարոն մը այցելութեան եկած էին, ըստ սովորութեան քննութիւնս կատարեցի ու մօտենալով հարցուցի — Տիկին պայուսակնիդ այս ինչ տեղէն... — ընկերս ձեռքէս քաշեց մինչ ես կը շարունակէի պարոնին դարձած — փողկապնիդ այնինչ խանութէն, գաւազաննիդ այն ինչ տեղէն գնեցիք: Կրնաք երեւակայել ուրախութիւնս երբ ըսին թէ ճիշտ էի գուշակեր: Այդ օրէն սկսեալ աւելի եռանդով յարատեւեցի այս տարօրինակ մարդանքին մէջ:

### ԱՐԱՅ ՏՕՄԻՆԵԱՆ



### ՀԱՅՐԵՆԻ ՆԱՄՈՒԿՆԵՐ

Արեւմտահայոց 10 և 20 Մայիս 1921.

Սիրելի տղա՛ք,

Թերեւս դուք կը կարծէք որ Հայաստան մեռաւ, թաղեցիներ ու ծանր քար մը դրինք վրան, թերեւս կը կարծէք որ Հայաստանին հետ խաչ քաշեցինք նաև մեր սրտին այնքան մօտիկ սկաութութեան և մարմնակրթանքի վրայ:

Բոլորովին կը սխալվէք...

..

Անցեալ տարուան յուլիս 26 ի յիշատակելի բաժանումէն ի վեր գլխէս անցածներն մասամբ գիտէք, մասամբ ոչ: Ես այդ մասին չսիրտի գրեմ ձեզի, հարկաւ երջանիկ առիթներ պիտի լինին, որ կարողանամ այդ ամէնքն պատմել ձեզ բերանացի: Ես ուզեցի որ այս նամակս աւելի մը տեղեկան տեղեկագիր մը ըլլայ մեր այժմու մարմնակրթական շարժումին քան թէ արկածներուս պատմութիւնը:

Մարտ 22 ին երեւանէն մեկնեցայ և քանի քանի անգամ մահուան հետ մտերմական տեսութիւններ ունենալէ վերջ անխորձ հասայ այստեղ: Երկրայանալով Ամերիկեան Օղնութեան Կօմիտէի լիազօր Capt. Brown ի, իրմէ ստացայ պահակապետի պաշտօնը:

Ամերիկացիք Ալէքսանտրօբօլի մէջ երկու հիմնարկութիւններ ունին, Բօլիկօնը՝ ուր կան մանչ որբերը, իսկ Քաղաչի Բօսթի մէջ աղջիկները:

Երբ պաշտօնս ընդունեցի, այդ կը նշանակէր միայն պահակապետութիւն:

Բայց երբ տեսայ պահակները և պահակա-

նոցը, երեւակայութիւնս նորէն սկսաւ թռիչք առնել:

Տ'օ, ըսի, Սա տղաքը սկաուտ շինենք:

Պահականոցը ալ յարմար էր, միջավայրը ամփոփ: Եթէ չ'օգտուէի պատեհութիւններէն՝ բրօզի օդն ու ծովը, Տորքեան օրերը, Հ. Մ. Բ. Մ. ի փառքն ու պատիւը Հարամ պիտի ըլլային ինչ:

Գացի Mr. Brown ի քով, հասկցուցի նպատակս՝ «Ինչ կուզես ըրէ ըսաւ»: Լայն բացաւ պահեստներու դռները՝ «Ինչ կ'ուզես ըրէ, հաւանածդ առ» ըսելով:

Եւ հիմա Քաղաչի Բօսթի պահակները սկաուտ-աթլէթներ են, և պահականոցը՝ իր ըրջանակով՝ այնպիսի մարմնակրթական հաստատութիւն մը, որ եղական է հայաստանի մէջ, և որուն շատ տեսակէտով կարող է նախանձիլ Պօլիսը:

Սկսայ գործի:

Մի գիշեր, այդ գիշերուան յիշատակս ինձ համար անսպառ արդիւնք է զուարթութեան և քիչ մըն մ'ալ պարծանքի, մի գիշեր տղաքը իրենց խմբապետները զրկեցին իրր պատգամամուտը, ինձ յայտնելու թէ սկաուտական շորեր չեն հագնիր, թէ կարճ բանթալօն հագնիր մտօթ է, և ըն. և ըն. ննջարանին մէջ կ'սպասէին պատգամաւորութեան վերադարձին: Պահանջները պէտք է ընդունէի, ապա թէ ոչ...

Ապա թէ ոչ ի՞նչ... — Հի՛յ:

Պատգամաւորութիւնը նոյնութեամբ վերադարձաւ, բերածը ետ տանելով, գլխիկոր, խըրատուած, համոզուեցան որ իրենց երանելի օրերը անցիր են:

Հիմա բոլորն ալ սկաուտ են, նորնծայ և արժանի եղբայրները պոլսեցի կտրիճ հայ սկաուտներուն:

Հիմա չես կարող համոզել, որ կարճ բանթալօնը, սկաուտական հագուստները հանեն:

Հայտնաք չես ըսեր, խռովութիւն, էնթրիկ, անկրթութիւն իսպառ կորած են:

..

Ինչպէս ըսի, մեր պետն է Captain Brown ը, անոր նման ասպետ օտարազգի գործիչ հազիւ թէ ոտքը դրած լինի Հայաստան: Անիկա այստեղ մեր սկաուտներուն մեծ եղբայրն է, սկաուտապետը թող լաւ տղաք ըլլան, ամէն ինչ կուտայ:

Հիմնարկութեան արհեստանոցները այս միջոցիս մեզ համար կ'աշխատին միայն փայտի արհեստանոցը նոր շինեց կօլի փայտեր, փառաւոր, դեռ կը շինէ գաւազաններ, այսօր պիտի յանձնէ high jump ը, և վազուընէ պիտի սկսի hurdle ներ շինելու:

Կաշեգործները զբաղում են մեր գօտիներով: Հիւսնեքը պէտք է շուտով սկսին տուչի բաղնիքի պատրաստութիւն: Կար ու ձեւի արհեստանոցը կը կարէ սկաուտական հագուստները:



Ձի մոռնամ յայտնելու, ի պէտս հետաքրքր-  
քիրներու որ իմ համակրելի օգնականս է Սկիւ-  
տարի Հ. Մ. Բ. Մ. էն Ձաքէոս Մարտիկեանը, և  
չատ լաւ «եօլա» կ'երթանք:

Ձաքէոսը հազիւ հազ կարսի մէջ կարողացեր  
է փրկել մեզ հետ բերուած Հ. Մ. Բ. Մ. ի դոյ-  
քերու աննշան մնացորդները. այդ խնկաններն են  
7 ձեռք հագուստ, 6 գօտի, 5 զլխարկ, 1 սկաւա-  
ռակ, 1 ֆուլթպօլ, 1 փոմփ, 2 ական արշըն կար-  
միր և կապոյտ կոտոր, մի քանի «հայ սկաուտ»,  
3 հատ սկաուտական օրինագիրք, 3 հատ le liv-  
re de l'celaereur, 4 հատ քօքարտ:

Աթլէթական գոյքերու կողմէն ազքատ ենք:  
Գունդերը կոտորած են, կը գործածենք՝ Ռուսա-  
կան եկեղեցիին չորս անկիւնները գրուած հին  
ոււմբօրը, որոնց վրան ծակ է, խոշոր են և 8  
kilo 188 կրամ կը կշռեն:

Սկաւառակը մէկ հատիկ է, և իր շրջանակէն  
դուրս գալու ցանկութիւններ կը յայտնէ:

Մէկ ֆուլթպօլ մը ունինք, մէկ ալ իմս, երկու  
է յասթիկ ունինք, բայց Solution չի կայ ոչ ալ  
կոտոր:

Ուր է «հայ սկաուտը», ինչեր կ'ընէք կոր որ  
մենք չգիտենք. զեռ անցեալ տարուան ողիմպի-  
ականին արդիւնքը չ'եմ գիտեր:

Կռփամարտը մանաւանդ, որ այնքան նոր և  
և տարօրինակ երեւոյթ մըն է այստեղ, ահագին  
հետաքրքրութիւն առաջ կը բերէ: Տղոց մէջ ի-  
րական տաղանդներ կան. այստեղ style ունեցող-  
ներ կան որ մարդ կը զարմանայ:

Երեկ տեղի ունեցաւ մեր նոր դաշտին վրայ  
միջ-խմբային ֆուլթպօլի լիկի առաջին պաշտօ-  
նական մրցումը և խումբեր կան: Առաջին խումբը  
է ըզին յաղթեց 3-1:

Պօքսի, չուանի, գունտի, վազելու, և շն, ի մըր-  
ցումները միշտ միջ-խմբային բնոյթ ունին և նի-  
շեր կը գրուին արդիւնքները կը փակցուին պա-  
տերուն, պահակային ամէնօրեայ հրահանգներուն  
գիմաց: Պատերը զարգարուած են գրքերէս կըտ-  
րուած սկաուտական և մարմնակրթական խոշոր  
պատկերներով:

Այստեղ պէտք է յայտնեմ որ սկաուտական  
գրութիւնը քիչ շատ յարմարցուցած եմ պահա-  
կային գրութեան: Օրինակ, յիսնապետի գրու-  
թիւնը:

Մէկ խօսքով, մեզ մի մոռնաք, կ'արժէ որ  
զբաղուիք, որովհետեւ արդիւնքները արդէն շօ-  
շափելի են և զեռ կը լինին: Ամէն ինչ նպաստա-  
ւոր է, գլուխնիս կանգնած է Capt. Brownը, որուն  
համար կարժէ որ երկոյս կեցցէ տան մեր Պոլսեցի  
սկաուտները, (Ձեր նամակը բոլոր ընկերներու ներ-  
կայութեամբ կարդացուեցաւ եւ ձեր «կեցցէ» ի փափազը  
գործադրուեցաւ. Ի. Խ.) շինութիւնը նոյնպէս նպաս-  
տաւոր է. փառաւոր ննջաարան մը ունինք, ուր  
120 անկողին կայ: Ֆուլթպօլի դաշտին վրայ  
մօտերս Clube House մը պիտի ունենանք:

Յաջողութեան մէկ ուրիշ պատճառն ալ այն

է որ լիազօր եմ մինակ ես եմ ու իմ խօսքս  
ժողով մօղով հարկաւոր չէ որոշում մը գործադ-  
րելու համար, ոչ ալ խաչածեղ տարրեր կան:

Ուրեմն՝ տղաք, զեռ կ'աղբինք. կը յուսամ  
թէ երկնքէն լուսանկարչական գործիք մը կը  
հասնի, որէտղի մեր գործունէութիւնը պատկե-  
զարդենք: Իսկ առայժմ գոհացէք իմ շափաղանց  
հաղճեղ տեղեկագրով:

Կեանքիս մէջ ոչ մի ժամանակ այսքան զբաղ-  
ուած չ'եմ եղած, բայց երբէք ալ այսքան ա-  
նուշ զբաղում չ'եմ ունեցած:



Պ. Վ. Ա. Ա. Ն. ՉԵՐԱՅ

Հ. Մ. Բ. Մ. ի Հայաստանի ներկայացուցիչը, որ իրեն  
նամար միայն Հայաստանը կարելուցուրիս ունի  
եւ ոչ թէ թեմիսը:

Գոյքերուս մեծ մասը դտայ, թէև շատ ու  
չատ բան պակաս է: Մարմնակրթական գրքերս  
կը մնան ամբողջութեամբ:

Ես առայժմ չ'եմ խորհիր Պոլիսի մասին, այս-  
տեղ պոլիս է ինձ համար և բան մ'ալ աւելի,  
թէև շատ բան ալ պակաս:

Տղոցը բարոյական կերպարանափոխումը կա-  
տարեալ է արդէն: Իսկ ֆիզիքական մարդական  
կեանքի մէջ եռանդով նետուեցան և մարմնական  
զարգացումին մէկ ամուտան մէջ արդէն նախան-  
ձեկի լինելու աստիճան զարգացաւ: Բնածին ձիւ-  
քերով օժտուած տղաքներ շատ կան, որոնք մարմ-



Նահրթական աշխարհին մէջ աստղեր կարող են լինել, Բարձրութիւն ցատկերու առաջին փորձին, 15 ամեայ կարնեցի Սարգիս Յովհաննէսեանը 1 մ. 28 ցատկեց անթերի stye ուլ, անցեալ օր 1 մ. 30 ը անցաւ: Որիչ 3-4 տղաք կան որոնք մտէն կը հետապնդեն զինքը:

Ժամանակս չի ներեր մանրամասնութեանց մէջ մտնելու, բայց շատ ուշատ գոհ եմ Սա բնձ համար երազ մըն է որ իրականութիւն կը դառնայ, ունենալ 100 տղայ, մարզել իբր սկսուտ և իբր մարզ, լինել քաջալերուած ու լիազօր, միջոցներն ու մրջալայրը ունենալ, արդիւնքները քաղել: Բոլորը իրականացան, շնորհիւ մեր անուգական Capt. Brown ին:

Տղոցը տրամադրութիւնը շատ բարձր է, որ կ'ապրին կոր, մաքուր, լաւ դաստիարակութիւն եւ չարքաշ կեանք, ուսում, աշխատութիւն և զբօսանք, ամէն ինչ ունին:

Փոքրիկ Պոլիս մը, մանրանկար, Հ. Մ. Բ. Մ. ունինք, որտեղի պաշտելի զէմքերը սակայն լուսանկարներու հաւաքածոյիս մի քանի թանկագին խլեակներուն վրայ միայն կ'երեւին:

Տղե՛րք, մի պատգամաւոր, քննիչ, տեղեկակարեր զրկեցէք մեզ մօտ, որ տեսնայ ու դառնայ ես իմ մասիս շատ զբիւլ չեմ ուղեր: Ես դժուարահաճ եմ ալէն բանի մէջ, բայց եթէ ես գոհ եմ, ալ հասկցէք:

Ի՛նչ անակնկալ կը լինէր եթէ կարօն յանկարծ դար:

Տղա՛ք, մեղի երգարան պէտք է: Իմիններս «անափօ» ըբեր են: Տղոցը երգ պէտք է սոլիւցընել: Եղանակներ շատ զիտեմ, բայց բառեր քիչ:

Ձեր գործունէութենէն բոլորովին անտեղեկ եմք: Ինչ որ անցաւ դարձաւ Հ. Մ. Բ. Մ. ի կեանքին մէջ, մեկնելէս ի վեր, չեմ գիտեր: «Հայ Սկսուտներուն անհամբեր կ'պատենք:

Ձերդ միշտ  
ՎԱՅԷ

Յ. Գ.— Carp. Brownի հետ նոր տեսակցեցայ, պիտի սկսուգտնենք նաև Բօլիկօնի տղաքներէն 800 հատ: Ինձ առաջարկեցին երթալ այնտեղ, մերժեցի: Այսու հանդրձ ընդունեցի այնտեղի ալ ընդհ. սկսուտապետ լինելը: Մեր երկու ֆութպօլէն մէկն ալ զրկեցինք այնտեղ:

Կ'ըմբռնէք որ գործս ծանր է: Կը թելադրեմ որ Mr. Yarrows տեսնէք և առաջարկէք մարզիչներ ուղարկել, եթէ այդպէս «էնայիներ զտեսնին Մարդիչ ըսելով հոսնաներ, սալօնձիներ և artisteներ ըսել չեմ ուղեր: Համետ, ոչ ցուցամուլ, գործի տղաքներ: Մարումեանը շատ յարմար կը տեսնեմ: Ես լաւ իմ և լաւատես, նոյնը կը մազթեմ ձեզ: Մեզ մի մոռնաք, և ձեր անուշիկ հոգածութեան առարկաները ըբէք մեզ:

Տղոցը ողջոյնը ձեր ամէնուզ, իսկ իմ համբոյրներս: Երկար նամակներ կ'ուզեմ: Համբոյրներ ձիգմէհանին, Վարպիս, Եղուարդին, Տիգօին, Օննիկին, ևն., ևն.:



Նորէն մեղ  
ՆՈՅՆ



**ՄԱՐԶԱՆԵԱՐԷ**

**ԿՈՄՓԱՍԱՐՏԻ ԱՇԽԱՐՀ**



Յրանսացի կռամամարտիկներէն Գոլիի որ վերջերս Աւստրալիոյ բոլոր կռամամարտիկներուն յաղթեց (անշուշտ իր ծանրութեան մէջ), այս անգամ կուզէ չափուիլ աշխարհի շամբիօն Բեքե Հեռմանի հետ, այս մրցման համար Գոլիի մարզիչը էօսըրէն 50000 Փո. կը զնէ:

\*. ԵՒՊԱԿՈՒ կռամամարտիկներէն ձօն Պրոմըն, Քրանսայի և Եւրօպայի շամբիօնը եղող Շատը Լըսուն պարտութեան մատնեց 18 բաունտէն, մրցումը (կէտով) շահուած է:

\*. Բէթի Հիոմաքս վերստին ԱՇԽԱՐՀԻ ՇԱՄԲԻՈՆ.— Հէռման որ վերջերս պարտուած էր ձօն Լիչի կողմէ և կորսունցուցած իր շամբիօնի անունը, այս անգամ լաւ մը մարզուելէ վերջ, վերստին կուսկցաւ նոյն հալառակորդին հետ և մեծ առաւելութեամբ յաղթող հանդիսացաւ: Շատ քիչ անգամ տեսնուած է որ շամբիօնութիւնը կորսնցնող կռամամարտիկ մը վերստին շամբիօն ըլլայ: Մակոյն Բէթի Հեռման հալառակորդին կարեւորութիւն չի տարուն պատճառաւ էր որ շամբիօնութիւնը կորսնցուց, այսու հանդերձ կ'արժէ միշտ յիշել անունը այս սիանթիֆի և հարուածող պօքստէին և ծափահարել զայն՝ երբորդ անգամ շամբիօն ըլլալուն համար:

ԱՇԽԱՐՀԻ ՄԻՋԱԿ ԵՄԱՆՐՈՒԹԵԱՆ ԿՈՄՓԱՍԱՐՏԻ ՇԱՄԲԻՈՆԸ ՊԱՐՏՈՒԱԾ.— ձօննի Ուիլսոն աշխարհի շամբիօնը պարտուած է Պրիան Տօունէյի կողմէ:



**ԱԹԼԵԹԻԿ ԿԵԱՆՔ**

ԴԱՐՉԵԱՆ ԵՒՈՒՄԻ.— Սթօքհօլմի տարեկան միջազգային սպիմպիլիանին, Նիւսի 1 մղնի մրցումը կը շահի 4'13 9/10 բղէն. երկրորդը 100 մեթր. այս ժամանակը՝ անղլիացի նշանաւոր Հիլի վերջին Անդրիոյ շամբիօնութեան մէջ կրտրած ժամանակէն 1/10 տարբերութիւն ունի. ինչպէս կերելի աշխարհի մղնի ռէքօրը կոտրելու յոս ունեցող միայն Հիլը և Սթէլըսը չեն այլ Նիւսի ևս կրնայ և ամէնէն զիւրաւ կոտորոն ալ ան պիտի ըլլայ քանի որ վերի ժամանակէն առած է առանց հետ կար զոր մրցող ունենալու: Իսկ Հիլ մինչև վերջին երկվայրկեանը քովը ունէր Սթէլըսը. աս ալ չի մոռնանք ըսելու որ Սթօք-



հօլմի մրցումին 12 հոգի համբայ կ'ելեն և Նիւն-  
մի 200 մեթր վերջ միայն կ'ընայ զլուխ անցնելու  
ու այդ 200 մեթրին մէջ եթէ ան աղատ վազեր  
կարելի է աշխարհի բէֆօրն ալ կոտորելու Միւս  
մրցումները հետեւեալ արդիւնքները տուած են.—  
100 մեթր.— Ռէյչէլ (Շ) 10 3/10. 400 մեթր.— Վէյնստ  
(Շ) 50 8/10. Երկայնութիւն.— Ելուստա (Կեր.)  
6,93 մեթր. Բարձր.— Նիլրըն (Շ) 1,80 մեթր. Գունտ  
նետել (Երկու ձեռքով) Հէկոզ (Շ) 24,72 մեթր.  
Նիզակ.— Լիլլիէ (Շ) 102,46 մեթր. (Երկու ձեռ-  
քով)

\*. Շուէտացի վէյնստ աշխարհի 500 մեթրի  
բէֆօրը կը կոտորէ 1'57/10 էն և ինչպէս զիտենց  
նախկին բէֆօրը կը պատկանէր Ֆրանսացի Տէլ-  
վաաի 7'58/10-ով և Սակայն այս կը մնայ մինչեւ որ  
Աթլէթիկ յանձնատնութիւնը կողմէ վախճուցուի  
իրաւ որ այս բէֆօրը ամերիկեան բէֆօրէն քանի մը  
երկվարկեան պակաս է սակայն անոնցը ետրտա-  
և ասոնցը մեթրի հաշիւը ըլլալուն երկու տարբեր  
բէֆօրներ կան

\*. Ամերիկեան և Անգլիական համալսարաննե-  
րու Աթլէթիկ մրցումներու ժամանակ աշխարհի  
երկայնութեան ցատկելու բէֆօրը կը կոտորի:

Ամերիկեան Եէյլ-Հարուըրտ և Անգլիական  
Օքսֆօրտ—Դէմպրիճ համալսարաններու մրցում-  
ները վերջացան՝ ամերիկեան յաղթանակով, որոնք  
10 մրցումէն 8 ը շահեցան: Հարուըրտ համալսար-  
անէն կուստէն (խաբէրիկ) 8 սանթիմ. տարբերու-  
թեամբ կոտորեց աշխարհի աէքորը որ 1901 էն  
ի վեր կը պատկանէր Օգոնըրի, 7,615 մեթրով.  
անաւասիկ արդիւնքները: 100 եարտա.— կուս-  
տէն (հ.) 10,0/5 երկ. 410 եարտա.— Էրտ (Օ.) 49 երկ.  
1/2 մղոն.— Դէմպրի (հ.) 1'55. ? 1 մղոն (1600 մ.)  
Սթէլընտ (Գ) 4'20 2/5 վայր. 2 մղոն.— Տուկլաս  
(հ.)—120 եարտա արգելք.— Գոսկէն (հ.) 152/5.—  
Երկայնութիւն.— կուստէն (հ.) 7,696 մեթր.—  
Բարձրութիւն 1,905 մեթր.— Գունտ նետել.—  
Թօլպն (հ.) 13 24 մեթր. Մուրն նետել.— Պոսու  
(հ) 48,63 մեթր

\*. Ֆրանսիայի Զոնիթերիւ Աթլէթիկ Մրցումները  
Զուիցերիական զիւրին յաղթանակով վերջացան:  
Ֆրանսացիք Զուիցերիոյ կարեւորութիւն չի տա-  
լով տկար խումբ մը զրկած էին, ինչ որ իրենց  
չարաչար պարտութեան պատճառ եղաւ: Ահա-  
ւասիկ մրցումներուն արդիւնքը:

100 մեթր.— Իմպալ (Չ) 11 1/5. 200 մ.— Իմ-  
պալ 22 3/5. 800 մ. Մառթէն (Չ) 1'36 1/5. 1500 մ.  
Մառթէն (Չ) 4'6 2/5. 5000 մ.— Կիյմ (Ֆ) 16'40  
3/5.— 110 մ. արգելք.— Մօզըն (Չ) 16 2/5. Բարձ-  
րութիւն.— Մօզըն (Չ) 1,71 մեթր. Երկայնու-  
թիւն.— Կէսքալ (Չ) 6,55 մեթր. Չող ցատկել.—  
Կէսքալ (Չ) 3,50 մեթր. Գունդ նետել.— Կա-  
նըս (Չ) 11,51 մեթր.— Սկաւ. նետել.— Էլլիէ (Ֆ)  
37,11 մեթր. Նիզակ.— Մօզըն (Չ) 46,25 մեթր

\*. Գերմանացի Տրնգըն մրցման մը մէջ  
աշխարհի 300 մեթրի բէքորը կը կոտորէ կարելով  
34 9/10 էն, նախկինը ֆինլանտացի Գիւլմօֆի կը  
պատկանէր 35 8/10 ուլ: Սակայն միշտ հետո է Բա-

տուքի 33 երկէն որ տակաւին պաշտօնապէս չէ  
ընդունուած.

\*. ԲԱՐԻՉ-ՎԵՆԷՎ ԻՊԱԿԱՆ ԱԹԼԵԹԻԿ ՄՐՑՈՒՄ-  
ՆԵՐ, 80 մեթր.— Տըլարիէն (Բ) 12 1/10. 250 մե-  
թր.— Պոէառ (Բ) 38 2/5. 1000 մեթր.— Պոէառ  
(Բ) 3'28 4/5. 83 մ. արգելք Տըլարիէն (Բ) 14 1/5.  
Գարձրութիւն 1,30. մ. Նիզակ թանիօ (Բ) 33,73 մ.

\*. ԻՆՅՐԱԿՆԱՆ ԱՐԵՆԵԼՔԻ ԸՆԴՆ. ՈՂԻՄՊԻԱ-  
ԿԱՆՆԵՐԸ.— Եանկայի մէջ վերջերս տեղի ունեցան  
Մայրագոյն Արեւելքի Հինգերորդ Ողիմպիական-  
ները, որոնք երկու տարին անգամ մը կանոնա-  
ւորապէս տեղի կ'ունենան Այս տարուան ար-  
դիւնքները նախորդներէն շատ զերազանց են:  
Ստորեւ կուտանք զանազան մրցումներու չափա-  
նիշները և առաջինները.— 100 եարտա վազք.—  
Քաթալոն (Ֆիլիպեան կղզիներէն). 10 երկ. 220  
եարտա վազք.— Գաթալոն (Ֆիլիպ. կղզի.) 23 1/5  
երկ. 440 եարտա վազք.— Լօբէզ (Ֆիլիպ. կղզի.)  
52 4/5. 800 եարտա վազք.— Թօտա (ձարոնցի).  
2'3 4/5. 1 մղոն վազք.— Օգալաքի (ձարոնցի)  
4'4 1/5 մղոն վազք.— Եիօշիքա (ձարոնցի)  
26'44. Մարաթօն (25 մղոն) վազք.— Սթաէէն-  
յա (ձարոնցի) 2 ժամ 37'16 4/5. 120 եարտա  
ցանկարչաւ.— Ամատ (Ֆիլիպ. կղզի). 16 3/5. 220  
եարտա ցանկարչաւ.— Էսգամօս (Ֆիլիպ. կղզի.)  
26 2/5. Բարձրութիւն ցատկել.— Եուան (Չինացի)  
1,825 մեթր. Երկայնութիւն ցատկել Սանթօս (Ֆի-  
լիպ. կղզի.) 7,06 մեթր. Չողով ցատկել.— Ալօ  
(Ֆիլիպ. կղզի.) 3,69 մեթր. Երեք քայլ ցատկել.—  
Ալօ (Ֆիլիպ. կղզի). Նիզակ.— Ազաօլա (ձարոն-  
ցի) 49,27 մեթր. Սկաւառակ.— Թիւ (Չինացի).  
84,03 մեթր. Երկաթ նետել.— Նազամուրա (ձա-  
րոնցի) 13,36. Բէնթաթլօն Թիւ (Չինացի). Տէգ-  
աթլօն.— Թատուրան (Ֆիլիպ. կղզի.)

Ֆիլիպեան կղզիները առաջին հանդիսացան  
59 կէտով, ձարոն՝ երկրորդ 53 կէտով, Չինաս-  
տան երրորդ՝ 13 կէտով:

\*. ՍԹՈՔՂՈՒՄ-ՊՈԻՏԱՐԷՏ ԱԹԼԵԹԻԿ ՄՐՑՈՒՄ-  
ՆԵՐԸ Սթոքհոլմի յաղթութեամբ հետեւեալ ար-  
դիւնքները տուած են: 100 մեթր.— ձէնօ (Պ)  
10 8/10. 400 մեթր.— Լիլնա (Ս) 51 1/10. 800 մեթր  
Սնտպլէտ (Ս) 1'37 6/10. 1500 մեթր.— Լընտիոն (Ս)  
4'4 7/10. 5000 մեթր.— Լընտրթոն (Ս) 15'52 7/10  
110 մ. արգելք.— Գոթաթիանըն 15 7/10. Բարձ-  
րութիւն.— Կէսքալ (Պ) 1,83 մեթր. Երկայնու-  
թիւն.— Կէսքալ (Պ) 7,02 մեթր. Երկաթ.— Պէ-  
տօ (Պ) 12,97 մեթր. Սկաւառակ.— Չարհան  
(Ս) 41,63

Արդեօք մենք ալ խալացիներուն քանի մը  
պօքտօններու ըրածին պէս եթէ պրպտինք ար-  
դեօք Կէսքալին և Պէտօին խաղ ըլլանին չենք  
կրնար ապացուցանել:

Մրցման մը մէջ, և երկուքն ալ երկայնու-  
թեան բէֆօրին հաւասարած են:





### ՀԵԾԵԼԱՆԻԻ



Աշխարհի արագութեան ամաթէօս շահերու նութիւնը շահած է ճանիմարքացի կնարուարն:



### ԼՈՂԱԼ

Իտալացի Լուչարդ Թրուպօչի Մանչի ծովը անցնելու փորձ մը պիտի ընէ, եթէ չի յաջողի 15 օր վերջ անգամ մը կա պիտի փորձէ, ան կռիւնէ գլուխէն ճամբայ պիտի ելլէ: Ուրիշ ամերիկացի լուչարդ մը Հալոսի Սըլլիվըն կա փորձի սկսած է:

Անգլիոյ 100 կարտայ լողալու շամբրիոնութիւնը շահած է վան Շէլ պէլճիգացին 57 3/5 էն կտրելով հեռաւորութիւնը:

Պէլճիգայի 200 մետր լողալու շամբրիոնութիւն շահած է Պիլթէ 2'44 4/5 էն կտրելով:

ԴԱՐՁԵԱԼ ՖՐԱՆՍԱՅԻ ԱՂՋԻԿՆԵՐ, Օրիորդ Տըլօի 100 մետր կռնակի վրայ լողալու ֆրանսական ռէֆօր 11 երկ. տարբերութեամբ կը կտրէ 1'48 3/5 էն կտրելով և Օր. Լէպարն իր կարգին 100 մետր ազատ լողալու ռէֆօր 8 երկ.ով կը կտրէ կտրելով 1,29 էն. և ըսել որ ֆրանսայ ամէլէթ չ'ունի... Իրաւ ամբլէթներ չ'ունի սակայն ունի ամբլէթուհիներ որոնք կարծեմ 1924 ի ոլիմպիականին ֆրանսան միակ ներկայացողները պիտի ըլլան:

ՖՐԱՆՍԱՅԻ ծովու վրայ 500 մետր լողալու մրցում մը տեղի ունեցաւ Բէռնո առաջին կըլաւ 13'32 2/5 օվ:



### ԹԷՆԻՍ



Թիւրքն աշխարհի թէնիսի ռամբիոնը առաջին անգամ ըլլալով պարտուեցաւ, իր յաղթողը ուրիշ ամերիկացի մըն է վէնսան Ռիչըստ, ան աւաւելի գեղեցիկ ձեւեր ունէր և գիւրութեամբ կըցաւ յաղթել թիւրքն ինչ Ան հեռուեալ շախմատ յաղթեց 6-2, 6-1, 2-6, 6-0, չի մոռնաւք ըսելու որ Ռիչըստ 18 տարեկան է:

Նոր աստղ մը կա ամերիկայի մէջ: Օր Մափրէն Ուէզէլը վերջին մրցումներուն մէջ Օր. Պլահրտտի հետ հաւասար ելած է 80 մէթրի:



### ԿԵԴՐՈՆԻ ՔՐԱՍՆԵՆԱԿԵՆ



ՀԱՐԱՐԱՆԱԿԱՆ ԹԵՆԻՍԷՆ

Հետեւեալ գիտողութիւններուն վրայ բուրք մասնաճիւղերու ուշադրութիւնը կը հրաւիրուի:

1. Անգամ մը մեկ անգամ մը միայն պէտք

է ստորագրէ «Անգամակցութեան առաջարկ», — հետեւաբար և ստանայ, կեղքունին մէջ, միակ թիւ մը, — որ կ'ապրի անգամին հետ միութեան մէջ և անգամին միութենէն հեռանալով կը մեռնի: — 246/1 կը նշանակէ Սկիւտարի մասնաճիւղին պատկանող միութեան 246րդ անգամը:

II. Անգամ մը կրնայ, շատ բանաւոր պատճառներով, օրինակ՝ բնակութեան փոփոխութիւն, մասնաճիւղէ մը ուրիշ մասնաճիւղ փոխադրուիլ. այս պարագան պատճառ մը չկրնար ըլլալ որ միութեան հանդէպ իր պարտականութիւններու մէջ թերանայ, իր հին մասնաճիւղին հետ ապկախ հաշիւներ ձգելով: Այս մասին թէ հին և թէ նոր մասնաճիւղը պէտք է նախանձախնդիր ըլլայ, մեկնող և եկող անգամի մասին փոխադարձաբար տեղեկութիւն տալով, կեղքունին մէջ մասնաճիւղէ առ մասնաճիւղ փոխադրութիւնը տեղի կ'ունենայ նոր մասնաճիւղին թիւը աւելցնելով հինին քով: Այսպէս 572/2/1 կը նշանակէ 572րդ անգամը Բերայէն Սկիւտար փոխադրուած է. եթէ մասնաճիւղերը ո և է փոխադրութիւն չտեղեկացնեն և նոր «անգամակցութեան առաջարկ» զրկեն, կեղքունը կը ջնջէ այդ առաջարկը և փոխադրութեան գործողութիւնը միայն կը կատարէ:

III. Կեղքունը շատ որոշ կերպով գիտէ թէ որ անգամը որ ամիսը վճարած է. հետեւաբար անգամ մը չկրնար մասնաճիւղի մը մէջ յետեւալ պարտքեր թողուլ և նոր մասնաճիւղի մը մէջ նորէն սկսիլ կանոնաւոր վճարել. կամ նոյն իսկ մասնաճիւղի մը, իր յօսի բնթացքին համար վտարեալ կամ պարտականութիւնները կատարած չըլլալուն համար հրաժարեցուցուած անգամ մը չկրնար ուրիշ մասնաճիւղ մը խարել և հոն ալ արձանագրուիլ իբր բողոքովին նորեկ մը:

IV. Յետեւեալ պարտքերը կրնան դանձուիլ նոր կամ հին մասնաճիւղին կողմէ, պարագաներու համաձայն:

V. Մասնաճիւղէ մը մեկնող անգամի մը մասին ուրիշ մասնաճիւղի մը միայն ուղղեալ գրութիւն մը կտրելի է տալ հաստատող թէ՛ մասնաճիւղին հանդէպ իր պարտականութիւնը մինչեւ որ թուականը կատարած է:

VI. Անգամները, որքան ալ բարձրաստիճան ըլլան, պարտաւոր են իրենց ամսավճարները կանոնաւորաբար վճարել:

ԿԵԴՐՈՆԻ ՔՐԱՍՆԵՆԱԿԵՆ







Պատկերազեկ՝ Ա. ՍԱՐԳԻՅԱՆ

Հեղինակ՝ EMILIO SALGARI

Իր. Թրգմ. Հ. ՅԱՆՈՐԱՍ ԲՕՍՊԵՏԵՂԻԱՆ

Բ. ԻՆՔԱՆԵՐՈՒ ԳԱՆՁԸ (\*)

Ան՝ նորէն ելաւ նստեցաւ, քանի մը կաթիլ շարարաջուր խմեց, յետոյ բռնեցով երկրաչափին ձեռքերը, և աչքերը՝ որոնք երթալով կ'ըմբարնէին, սեւեռելով անոր վրայ, բեկբեկ ու խոստոճայնով նետուեալը պատմեց:

— Անտ տարիներ առաջ, տերեւներուն կախուած ամսուան (սեպտեմբերին) սկիզբը, հայրս որ՝ Նալանի ցեղին մեծ պետերէն մին էր, զիս իր խրճիթը կանչեց: Ան՝ տապարի երեք հարուած ընդունած էր կուրծքին՝ քանի մը պատերազմիկներու զէմ կուած պահուն ու մահամերձ էր:

«Քույր կային՝ երկու հին, ժանգոտած սընտուկներ, որոնք անտարակոյս մինչեւ նոյն օրը հոգի տակ թողուած մնացեր էին:

«Ինձ ըսաւ. Որդեակ իմ, քիչ ատենէն պիտի ներկայանամ Մեծ Ողիին. քեզի կը թողում ձիերս, իմ հաւատարիմ (tomahawack) տապարս, հրացանս և այս երկու սնտուկները, զորոնք խնամքով պիտի պահես:

«Այդ սնտուկները կը պարունակէն շատ հնամեայ թուղթեր՝ հօրմէս մնացած ու իրեն ալ իր հօրմէն յանձնուած: Թէ որ օր մը մեր ցեղը թշուառութեան մէջ իյնայ, զանոնք կարգայ, ու եթէ մէջը ցոյց տրուածին համեմատ գործես, ա՛յնքան զրամ պիտի ունենաս, որքան որ Ամե-

րիկայի ձիեր, խրճիթներ, զէնքեր և ստեստեղէն գնելու համար:

«Այսպէս ըսելով՝ աչքերը փակեց երբէք չբանալու համար: Հոգին թռած էր Մեծ Ողիին ծոցը:

Այս կէտը հասնելով Սմաքի կեցաւ ոյժ առնելու համար: Չայնը աւելի տկարացաւ, և ստառ քրտնք սկսաւ իջնել ճակոէն ու այտերէն:

— Մի՛ շարունակեր, բարեկամ, ըսաւ երկրաչափը, մահը կը փութացնես:

— Պէտք է որ խօսիմ, ըսաւ հնդիկը սնդելով. կ'ուզեմ խօսիլ:

— Գոնէ քիչ մը շունչ ա՛ւ:

Հնդիկը ժխտական ձեւ մ'ըրաւ եւ շարունակեց:

— Ինչ որ հայրս նախատեսեց, հանդիպեցաւ: Իմ ցեղս թշնամիներէն հալածուած, ճերմակներէն ու կարմիրներէն կողոպտուած, ամենամեծ թշուառութեան մը ինկաւ, ու ներկայիս թափառական կը շրջի Միսիսիբիի և Օհիոյի եզերքներուն վրայ՝ անթութեանէն ու յուրտէն հալածուած: Թէ որ մէկը չօգնէ անոր, վերջին Նալանիներ ալ պիտի անհետանան:

— Իսկ սնտուկները, հարցուց երկրաչափը: Չանոնք դեռ չբացի՞ր:

— Այո՛, և քանի մ'անգամ:

— Խնչ կը պարունակէին:

— Գրութիւններ՝ կրկին օրինակով. բայց երբէք չկարողացայ զանոնք լուսաբանել:

— Ո՞ւր են այդ սնտուկները:

— Մին՝ զոր խրճիթիս մէջ կը պահէի, գողցուեցաւ այդ ոճրագործներէն որոնք երկու զըն-

(\*) Սպանիական սրբապետքներէն առաջ, Բերաի մէջ (նաւաւ. Ամերիկայ) կը բնակէր Ինֆանտ կոչուած ցեղ մը, եւ իրենց բազաուները կը կոչուէին Ինֆանտոն Գարուս ու բաւական ազդեցիկ եղած են հաւաքալիկ Ամերիկայի մէջ, մինչեւ որ 1223 ին՝ Ֆրանսուա Բիլզար Սպանիացին, կ'երթայ կը սիրէ այդ երկրին եւ կը կործանուի ինֆանտոն կայսրութիւնը: Ի. Թ.



դակ մղեցին կուրծքիս մէջ. միւսը անտառին մէջ ծածկուած է:

Հնդիկը նորէն կեցաւ, բայց քանի մը վայրկեան ետք շարունակեց:

Եղբայր, ինչ որ ես չկարողացայ ընել, դուք ըրէք:

— Ե՛ս . . .

— Այո՛, դուք: Պիտի ըսեմ ձեզի անտուկին գտնուած տեղը, պիտի քննէք թուղթը, պիտի երթաք փնտռէք դանձը, ու կէսը իմ ցեղիս պիտի տաք կէսն ալ դուք ձեզի պիտի պահէք:

— Կը մերժեմ, Սմօքի:

— Ինչո՞ւ կը մերժէք, հարցուց հնդիկը անոյշ յանդիմանութեամբ:

— Գրամի պէտք չունիմ, Սմօքի, սակայն քեզ կը խոստանամ որ եթէ դանձը գտնեմ ամբողջութեամբ քու ցեղիդ պիտի տամ:

Հնդիկը գլուխը ցնցեց:

— Եղբայր, ինձ մտիկ ըրէ՛ք: Զեպէ՛ միշտ օգնութիւն ու նպաստ ստացայ. թոյլ տուէք որ ընմն որ ես ալ ձեզի բան մը նուիրեմ:

— Բայց, թերեւս ինձ նուիրելիք գրամդ չատ մեծ է:

— Զայն կը բաժնէք՝ Պարթընի, Ս'Քօնորի և Մորկոնի միջեւ. անոնք ալ ինձ բարեք ըրին:

— Պիտի ընդունի՞ն:

— Աղբատ սրտորդներ են՝ որոնք ապրելու համար ամէն օր վտանգներու կը դիմադրուեն: Երգունցէ՛ք թէ՛ պիտի կատարէք իմ վերջին կամբ:

— Շատ լաւ, կ'երդնու՞մ:

— Ենթահակալ եմ, շնորհակալ եմ, մընջեց Սմօքի, հիմայ ուշադրութեամբ ինձ մտիկ ըրէք:

Այսատեցաւ քիչ մը եւս շտկուել էլի, բայց ուժաթափ ինկաւ խուլ հասալ մ'արձակելով:

— Մահը կը մօտենայ, ինձ մտիք ըրէք. . . խրճիթիս ետեւը. . . կայ արահետ մը. . . որ կը տանի. . . դէպ ի անտառ. . . ծայրէ ծայր կրտրեցէք անցէք զայն. . . մինչեւ որ հասնիք կէսէն կտրուած կաղնիի մը. . . ու դէպ ի աշպիտի շեղիք. . . տասնըհինգ քայլ համրեցէք. . . մտիկ ըրէք, մտիկ ըրէք. . . յետոյ պիտի գտնէք. . . ուրիշ կաղնի մը. . . երեք. . . խորունկ կտրուածքով. . . փորեցէք. . . անոր ոտքը. . . անտուկը . . . հո . . . ն է . . . հո . . . . .

Կանգնեցաւ վերջին թափով մը, բռնեց երկրաչափին ձեռքը ուժով մը սղմեց. աչքերը թաւալեց, ցամքած շրթունքը բացաւ խօսք մը եւս ըսելու համար, ինկաւ ու մնաց անշարժ:

— Մեռա՛ւ, մըմբաց երկրաչափը՝ ձեռքը դրժբախտ հնդիկի սրտին վրայ դնելով:

— Պարթըն:

Խառնածինը ու պառաւը ներս վազեցին: Երկուքն ալ եղածը դուշակեցին:

Հէք Սմօքի, ըսաւ Պարթըն գնդակը հանելով: Անիծեալ ըլլան ոճրագործներդ:

Խրճիթին մէջ կարճ լուռութիւն մը տիրեց որ կ'ընդհատուէր թխամարթ պառաւին հեծկտուքով:

— Մոմեր վառեցէք, ըսաւ երկրաչափը:

Պարթըն տողրակէ մը հանեց երկու մոմեր, վառեց ու դրաւ զիակին մօտը:

— Հիմայ, շարունակեց սըր ձօն, բրիչ ու բահ մը առ և հետեւէ ինձ:

— Ասիկայ թաղելու համար՝ փո՞ս բանալու կ'երթանք:

— Ո՛չ պէտք է որ անտառը երթանք: Իսկ դուն պառա՛ւ, մի՛ լար. ես ունիմ տուն մը որ ասկէ լաւագոյն է, զայն քեզի պիտի տամ և ապրելու համար բան մըն ալ պիտի չպակտի քեզ: Երթա՛նք Պարթըն:

Խրճիթէն ելան, անոր շուրջը դարձան և կաղնիի անտառին մէջ տանող նրբուղին բռնեցին:

Արեւելքը սկսեց էր ճերմկնալ. կապարի գոյն ամպեր կը վազէին երկնքի մէջ, բայց չէր անձրեւեր ալ եւս փանի մը թռչուններ կը ճառագէին ծառերու ամենաբարձր ճիւղերուն վրայ, ու հետուն Մանֆորտովի կողմը, կը լսուէր շան մը հաջելը:

Սըր ձօն ու Պարթըն՝ քանի՛ մը հարիւր քայլ առած էին, երբ խիստ սուր սուլում մը հնչեց անտառին եզերքէն:

— Նշա՛ն մը, ըսաւ երկրաչափը կանգ առնելով:

— Երկու ընկերներս են, պատասխանեց Պարթըն: Կանչե՛մ դիտելու:

— Այո՛, կարեւոր են ինձի:

Պարթըն երկու մասները շրթունքը տարաւ ու սուլեց, ա՛յնքան ուժով որ կէս մղոն հեռուէն ալ կը լսուէր:

Անմիջապէս երկու մարդիկ Մօրկան և Ս'Քօնոր նետուեցան արահետին վրայ:

Առաջինը երկայնահասակ, քիչ մը նիհար, սգնուական կերպարանքով, սեփ սեւ աչքերով, նոյնպէս ամերիկեան ոճով կտրուած մօրուքով՝ մէկն էր. մինչդեռ միւսը՝ աւելի ցած ու յաղթանգամ, լայն ուսերով, սրճազոյն մարմնով, չէկ և խիտ մազերով մէկը: Երկուքն ալ Պարթընի պէս հագուած էին, և ղինուած էին քարայրնով և hockwicks զանակներով:

Երկրաչափը տեսնելով՝ յարգանք բարեւեցին:

— Ի՞նչպէս ես Մօրկան, իսկ դո՞ւն իր ընտանացի հարցուց սըր ձօն երկու սրտորդներուն մօտենալով ու ձեռքերնին սեղմելով:

— Լաւ ենք, պարոն, պատասխանեց Ս'Քօնոր:

— Բան մը զարկի՞ք:

— Այսպիսի գիշերով անկարելի էր արջուն հետքը գտնել: Սմօքի ի՞նչպէս է:

— Խեղճ ծերուկը մեռաւ:

— Մեռա՛ւ, պոռային տիրութեամբ երկու սրտորդներ:

— Գործ ունի՞ք հարցուց երկրաչափը:

— Ո՛չ մէկ գործ, պարոն, ըսաւ Մօրկան:

— Այն ատեն ինձ հետեւեցէք:

— Բայց ո՞ւր կ'երթանք սըր ձօն, հարցուց Պարթըն:

— Գետնէն հանելու համար թուղթ մը, որ մեծ գանձի մը գիւտին համար մեզի պիտի առաջնորդէ:

— Դա՛նձ մը գտնելու համար, բացազանչեցին խառնածինը և իր ընտանացին:




— Այ՛ն՝ բարեկամներ  
 — Բայց որ՞ն է այս գանձը  
 Երկրաչափ քանի մը խօսքով անոնց բացա-  
 տրեց Սմբէին իրեն հարցրած գաղանփքը  
 — Հիմայ ճամբայ ելլենք բարեկամներ  
 ճամբայ ինկան՝ միշտ արահետին հետևելով  
 ու քիչ յետոյ կէսէն կտրուած կաղնիին առջև  
 հասան: Երկրաչափը դէպ ի աջ շեղեցաւ, համրեց  
 ինչպէս որ հողիկը իրեն ըսած էր՝ տասներհինգ  
 քալ ու կանգ առաւ ու ինչ կաղնիի մ'առջև ու-

րուն վրայ կը տեսնուէին երեք խորունկ նը-  
 շանները:

— Հոս փորէ՛, Պարթըն  
 Խառնածի՛նը առաւ բրիչն ու սկսաւ փորել  
 Սինչդեռ Ս'Քօննոր, բահը բռնած մէկդին կը նե-  
 աէր հողը: Յանկարծ բրիչը հանդիպեցաւ կարծր  
 մարմնի մը որ մետաղի ձայնով հնչեց:

Պարթըն փոսին վրայ ծռեցաւ, ձեռքը խոթեց  
 հողին մէջ և ուժեղ ճիգ մ'ընելով՝ դուրս քաշեց  
 մէկ սոնաչափ երկայնութեամբ և վեց մատնա-



**Սըր ձօն այդ բազրը հանեց եւ ուշի ուշով բնեց...**

չափ լայնքով երկաթէ սնտուկ մը՝ ժանգի թանձր  
 խաւով պատած:

Սըր ձօն՝ դայն քննեց ուշադրութեամբ բա-  
 նալու համար գաղանակ մը գտնելու յոյսով, բայց  
 բան չտեսաւ: Առաւ բրիչը, ծխնիներուն այնպիսի  
 ուժով հարուած մը տուաւ որ ջախջախեցան:

Պարթըն փրցուց կախարհիչը ու երեւցաւ մա-

գաղաթէ գլան մը, բաւական դեղին, և սակեայ  
 բարակ շղթայով կապուած:

— Վաւերաթժուղի՛նը պառային որսորդները  
 խիստ յուզուած:

Սըր ձօն դայն հանեց, քակեց, և ուշի ուշով  
 քննեց:

— Ի՞նչ կը պարունակէ, հարցուց Պարթըն:



— Կը տեսնեմ գծադրութիւն մը, թիւեր ու սպաներէն խօսքեր:

— Կրնա՞ք մեզի մեկնել զանոնք, ըսաւ Ս'Քօննոր:

— Կը յուսամ:

Յանկարծ զարմացումի բացազանչութիւն մը բրդաւ անոր շրթունքներէն:

— Ի՞նչ կը կարգամ, . . . Ի՞նչ կը կարգամ, . . . պոռայ բեկուած ձայնով: Մորկան, . . . Պարթըն . . . Ս'Քօննոր, ինքաներու գա՞նձը . . .

— Ի՞նչ, . . . ինքաներու գա՞նձը գոչեց Մորկան: Ինքաներու գա՞նձը ըսիք, տէ՛ր, . . .

— Այո՛, Մորկան, այո՛ ինքաներու գանձը: Բարեկամներ, հարիւրաւոր միջոցներ գործ մտնելու պիտի երթանք:

— Բայց, ապահո՞վ էք որ չէք սխալիր, տէ՛ր:

— Ո՛չ, չեմ սխալիր Մորկան: Այս թուղթը մեզի համբան ցոյց կու տայ հասնելու այդ քարայրը որուն մէջ պահուած են շուսաքարի համբաւաւոր գանձերը:

— Քարգմանեցէք ա. դ գրութիւնը, տէ՛ր:

— Հինգ վայրկեան թողուցէք զիս:

Տապալուած ծառի մը բունին վրայ նստեցաւ, հանեց մատիտ մը ու տետրակ մը, սկսաւ աշխատութեան: Մորկան, Պարթըն և Ս'Քօննոր, աչքերով կը լսուէին գրուած տողերը կարծես երեքն ալ յանկարծական սաստիկ տենդէ բռնուած էին, այնպէս կը դողային բոլոր մարմնով: Երկրաչափն ալ հանդարտ չէր: Ստեպ կը բացազանչէր, ու քանի կը թարգմանէր վաւերաթուղթը, դէմքին վրայ ա՛յնքան կը սաստիկանար զարմացումը:

Տասնըհինգ վայրկեան յետոյ վերցուց գլուխը որսորդները դիտելով, ըսաւ յուզուած ձայնով:

— Սխալած չեմ, ստուգիւ ինքաներու գանձին վրայ է խնդիրը:

— Ըսէ՛ք սըր ձօն, հարցուց Պարթըն, մե՞ծ է այս գանձը:

Անհամար է Պարթըն, ա՛յնքան շատ որ կը գնէ նիւ-եօրքը բոլոր արուանձաններով:

— Մտիկ ըր՛էք ինձ բարեկամներ: «Շուրջ 1521ի, բերուի կայսրը Նուէյնա-Քարաք մեռնելով՝ կայսրութիւնը կը թողուր որդոյն Նուսաքարի, իսկ միւս որդւոյն Աթապալիբայի կը յանձնէր Գուրթոյի թագաւորութենէն: Աթապալիբա մերժեց ու երկու կողմէն սկսաւ կատաղի կռիւր: Գուրթոյի թագաւորը՝ զեղեցիկ, երիտասարդ, վեհանձն ու հմտագոյն զօրավարը՝ մի առ մի գրաւեց քաղաքները ու յաջողեցաւ վերջապէս եղբայրը գերի բռնել ու Քասսամաօքս խրկելով բանտարկել:

«Դժբախտ կայսրը՝ հորմէն ժառանգած ա՛ւագին գանձեր ունէր ու զանոնք պահել տուած տեղ մը՝ որ միայն իրեն և իր ամենահաւատա-

րիմ curachi (1) (քուրաքի)ներուն ծանօթ էր, ու զանոնք թաղող մարդիկը սպաննել տուած էր ու երբ՝ Բէրուէ տիրապետող Ֆրանչէսքօ Բիծարօյի զօրավարները Սոթօ և Պարքա իրեն այցելեցին, այդ գանձերը անոնց խոստացաւ՝ թէ որ զինք ազատէին: Դժբախտաբար՝ Աթալիբա ատոր հոտը առնելով ու վախնալով որ եղբայրը ազատածին պէս դարձեալ ասպարէզ պիտի նետուի, գայն գաղտաբար խղզել տուաւ Քուրեղքուէլ զօրավարին:

«Ի դուր անյադ Սպանիացիք վնասեցին այդ գանձերը. ի դուր տեղ շատ մը (քուրաքի)ներ տանջեցին գաղտնիքը կորզելու համար. ոչ գանձերը գտնուեցան ոչ ալ ատեն ատեն յանգուգն բախտախնդիրներու ձեռնարկը յաջող արդիւնքի մը յանդեցաւ:

«Այս թուղթը, բարեկամներ, կը մատնանչէ համբան՝ հասնելու այդ թաքստոցներէն մէկուն, թերեւս գլխաւորին, ու թերեւս միակին:

— Այն ատեն պէտք է գտնել այդ գանձերը, ըսաւ Պարթըն:

— Բայց ո՞ւր կը գտնուին, հարցուց Մորկան:

— Լսեցէք ինձ բարեկամներ, ըսաւ երկրաչափը թանկագին մաւերաթուղթը բացատրելով: Մեր մեկնակէտը պիտի ըլլայ, ինչպէս կը ցուցնէ այս գծագիրը, Մամուլներու Քարայրը:

— Այն ատեն գանձը մօտ է ըսաւ Պարթըն:

— Ընդհակառակն, շատ հեռու ըլլալ կը թուի կը ճանչնա՞ս Քարայրը:

— Ինչպէս կը ճանչնամ լիւրիզովիւր:

— Անշուշտ այն ատեն պիտի գիտնաս որ գետնուղիներէն մէկուն ծայրը կը գտնուի անդունդ մը Մալտորամ անունով:

— Դիտեմ, անդունդ մըն է որ դեռ հետախուզուած չէ, ու շատ խոր կը կարծուի:

— Ուրեմն, անոր խորը, եթէ պիտի հաւատանք վաւերաթուղթի ըսածին, կը գտնուի գետնուղի որ՝ կը տանի՝ ընդգետնեայ նաւարկելի գետի մը:

— Այս գետի՞ն ներքեւն է գանձը:

— Ոչ, թուղթը կ'ըսէ թէ՛ պէտք է կտրել անցնիլ գետին ամբողջ երկայնքը, որ շատ հեռու է, որով առաջ երթալ շատ մը գետնուղիներէն: Դանձը՝ պէտք է որ գտնուի բոլորածեւ մեծ քարայրի մը մէջ, որ բազմաթիւ՝ քանդակուած սիւներու վրայ կը հանգչի:

— Ո՞րքան հեռու Մալտորամէն, հարցուց Մորկան:

— Թուղթը չըսեր գայն, սակայն կ'իմացնէ որ պէտք է շատ մ'օրեր նաւարկել ու նաեւ երկայն օրեր քալել:

(Շարունակելի)

(1) Բէրուի այդ ազնուականներ էին, որուն կայսրութեան կաբէուր պաշտօնները կը վարէին:

վարիչ խմբագիր <b>ԿԱՐՕ Պ. ՈՒՇԱԳԼԵԱՆ</b>	Արժուատի <b>ԳԱՌԼՕ ՇԱՀԻՆԵԱՆ</b>	Պատասխանատու-Տնօրէն <b>ՇՐԱԳԵԱՅ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ</b>
<b>Ցպագր. Կ. ՔԷՇԻՇԵԱՆ ԱՐԿԻ</b>		